№ 154 ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 ՅՈՒԼԻՍԻ № 154

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻԾ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

Յայտարարութիւնների համար պիտի վճարել 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պատիր)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում՝ Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Ռիգայում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիարար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սարուխանովօ-Կուրինսկի Ակցիսներ. Ընկերութեան Վարչութիւնը

պատիւ ունի յայտարարելու ի գիտութիւն ընդհանրութեան հետեւեալը. չը նայած անցեալ ապրիլի վերջերին «Баку» և «Каспій» լրագիրներում տուած վարչութեան յայտարարութիւններին, շատերը, փոխանակ իրանց ժամանակաւոր վկայականները (временное свидѣтельство) իսկական ակցիսների փոխելու, այդ առիթով գրաւոր հարցերով շարունակ դիմում են վարչութեան։ Ուստի նորից յայտարարվում է, որ ժամանակաւոր վկայական ունեցողները կարող են շնորհ բերել վարչութեան գրասենեակը, Բագու, Բալախանակայա փող., տուն ՊօռնիկօՎԵրի № 4, փոխելու իրանց ժամանակաւոր վկայականները իսկական ակցիսների։

1912 թւի դիվիդենդը տրվելու է այս յուլիս ամսի 18-ից միայն իսկական ակցիսների կտրոնների, իսկ ժամանակաւոր վկայականներով դիվիդենդ բոլորովին չէ տրվելու։

(ու.) առ. 571. 2—1

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրեւոցի

համար հարկաւոր է բարձրագոյն կրթութեամբ, մանկավարժական փորձառութեամբ

ՏԵՍՈՒՉ

Խնդիրները պատշաճ վկայականների և curriculum vitae-ի հետ ուղարկել հոգաբարձութեան։

Հասցէն՝ Шуша, Попечительству Армянской Духовной Семинаріи.

Թեմ. Դպ. Հոգաբարձութիւն

(օ.մ.) առ. 570. 3—1

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Ինչպէս հաղորդում են, Ռուսաստանը զինելով Անգլիայի խորհրդին, յայտնում է, որ ինքը կը հրաժարվի ինքնուրոյնաբար հանդէս գալուց, միայն թէ պահանջում է, որպէս զի պետութիւնները երաշխաւորեն Հայաստանի մէջ բարենորոգումներ մտցնելը։

—

Պետերբուրգի դիպլոմատիական շրջանների վարժում են համարում այն լուրերը, թէ Ռուսաստանը շուտով գրաւելու է Հայաստանը։

Այդ հարցը դեռ ևս քննված էլ չէ։

—

Կ. Պոլսում լուր է պատում, որ Թիւրք կառավարութիւնը երեք զօրաբանակ է ուղարկում Հայաստան։

—

Պարիզի «Matin» լրագիրը լսել է, որ Ռուսաստանը պետութիւնների համաձայնութեամբ մտադիր է ժամանակաւորապէս գրաւել զօրքերով Թիւրքաց Հայաստանը։ Դերմանիան հակառակ է այդ տեսակ գրաւման։

—

Պարիզում լուր է ստացվել, որ ռուսաց կովկասեան զօրաբանակը շատ մօտ ապագայում ժամանակաւորապէս կը գրաւի Թիւրքաց Հայաստանը։ Մեծ պետութիւնները համաձայն են Ռուսաստանի այդ քայլին։

—

Հռոմից, դիպլոմատիական աղբիւրներից քաղելով հաղորդում են, որ պետութիւնների մէջ բանակցութիւններ են տեղի ունենում Թիւրքիայի վրա միահամուռ ոյժերով ազդելու համար, որպէս զի խուսափեն Ռուսաստանի առանձնակի միջամտութիւնից, որը ըստ ամենայնի գրաւել Թիւրքահայաստանը։

—

Վիէննայի դիպլոմատիական շրջաններում նկատում են, որ եթէ Թիւրքիան չը հետևէ պետութիւնների խորհրդին, նրա բաղդը կը վճռվի ոչ թէ Ադրիանուպօլսի առջև, այլ Երզրումի մօտ։

—

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՐԷՖՕՐՄՆԵՐԸ*)

IV

Թիւրքիայի մահմեդականութիւնը կուլտուրական խաղաղ կեանք չէ ունեցել. նա իր ճակատի քրտինքով չէ ապրել։ Նա սեռնդէ-սերունդ ապրել է բռայի ձեռքի աշխատանքով, և, բնականաբար, նրա մէջ մեռել են ինքնաշխատութեան, ինքնօգնութեան ընդունակութիւնները։

Փորձի համար վերցրէք Թիւրքական Հայաստանի որ հարուստ մահմեդականին էլ կուզէք և դուք կը տեսնէք, որ նրա ամբողջ հարստութիւնը դիզված է կողոպուտներով, յափշտակութիւններով, ուսուկութեամբ և այլ նման ապօրինի միջոցներով։

Ո՞րքան ժամանակ է պէտք, որ ներկայ մահմեդական Թուրքիան կուլտուրական խաղաղ կեանքի պատրաստ սերունդ արտադրի, որը միևնոյն ժամանակ օժտված լինի այն առանձնայատկութիւններով, որոնք անհրաժեշտ են բարեկարգ երկրի գոյութեան պայքարին դիմանալու համար։

Այս հարցին դժուար է պատասխանել. բայց հեշտ է ենթադրել, որ մինչև որ մահմեդական Թիւրքիան մի այդպիսի սերունդ կը պատրաստի, պետութեան քրիստոնեայ հպատակները շատ աւելի առաջադիմած լինելով՝ արդէն իրանց ձեռքն առած կը լինեն երկրի տնտեսական, քաղաքակրթական ու այլ կուլտուրական ասպարէզները, որոնք պետութեան կեանքի փակաօղներն են կազմում։

Պէտք է նկատել, որ օսմ. կառավարութիւնը իրաւունք էլ չունի իր մահմեդական ժողովրդից առաջադիմական որևէ ընդունակութիւն պահանջելու։ Նա պէտք է հնձի այն, ինչ որ ցանել է։ Նա ցանել է աւազակութիւն, կաշառակերութիւն, ձրիակերութիւն. նա այս ուղղութեամբ է դաստիարակել իր մահմեդական ժողովրդին։ Եւ այսօր նա սարսափում է ըէֆօրմներից, համոզված լինելով որ նման ուղղութեամբ դաստիարակված մահմեդական ժողովուրդը ստիպված պէտք է լինի տեղի տալ և ամենաանպէս սարկանալու կուլտուրական ժողովրդի առաջ։

Սմայլը իր «Ինքնօգնութիւն» աշխատութեան մէջ այն կարծիքն է յայտնում, թէ պետութեան մէջ սահմանադրութիւնը հիմք կը բռնի այն ժամանակ, եթէ ժողովուրդը՝ ինքը սահմանադրական է, այսինքն սահմանադրական ոգով է կրթվել ու դաստիարակվել։

Այսպիսով սահմանադրութիւնը հանդիսանում է որպէս մի լաւ փորձաքար պետութեան քաղաքակրթ ու կուլտուրական տարրերը աւազակաբարոյ, անպէտք տարրերից զանազանելու համար։

Շատ չէ անցել, որ այդ փորձաքարի զարկ ազդեցութեան ենթարկվեց Թիւրքիայի ժողովուրդը։ Մենք տեսանք, որ Թիւրքիայում սահմանադրութիւն յայտարարվելով, հայ տարրը հոգով ու սրտով փարեց դրան, իսկ մահմեդական տարրը մինչև վերջն էլ մնաց անհաղ։

Հայ տարրը—լինելով խաղաղ աշխատանքի կարօտ, կուլտուրական կեանքով ապրելու ընդունակ և անզրդուելի իր յոյսերի մէջ, որ կարող է պետութեան կեանքի մէջ արժանաւոր տեղ ու դիրք գրաւել — փարեց սահմանադրութեան, սրա մէջ գտնելով իր գոյութեան գրաւականը, այն ինչ մահմեդական տարրը նոյն սահմանադրութեան մէջ տեսաւ իր մահվան դատավճիռը, որովհետև նա իր մէջ չէր գտնում ընդունակութիւն իր սովորական աշխատանքով ապրելու և իր ներկայ դիրքը մինչև վերջը պահելու։

Ինչպէս մի քանի տող շեշտեցինք, օսմ. կառավարութիւնը ըէֆօրմների առաւելութիւնները ընդունելով հանդերձ՝ գիտէ նաև վերոյիշեալ պարագան։ Այդ պատճառով էլ նա միշտ բուռն ընդդիմութիւն է ցոյց տուել ամեն տեսակ բարենորոգչական ծրագրի կամ բաւականացել է խոստումներով, երբէք չը կատարելու հաստատ որոշմամբ։

Նոյնպիսի խոստումներ, մի քիչ աւելի բարձրագոյն և եռանդուն ոճով, Թիւրքիան անում է և այսօր։ Բայց միևնոյն ժամանակ եւրոպական միջամտութեան ոյժը թուլացնելու մտքով գաղտագողի զիջումներ է անում այս կամ այն պետութեան, նրանց աջակցութիւնը ձեռք բերելու համար։

Եւ սա մի շատ պերճախօս ապացոյց է, որ եթէ բանը Թիւրքիային մնայ, նա ոչ թէ ոչ մի բարենորոգում չի մտցնի հայկական նահանգներում, այլև կը ստեղծի աւելի դժոխային պայմաններ հայ տարրին երկրից դուրս քշելու համար։ Որովհետև ըէֆօրմները Թիւրքիային ահնեսին ձեռնտու չեն։

Ա. Ց. Մուրադեան

Սամարղանդ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 և 14 յուլիսի

Սօֆիա.—Բոլգարական պատգամաւորութիւնը հաշտութիւն կայացնելու նպատակով ուղևորվեց Բուխարէստ. նրա մէջ մտնում են ֆինանսների մինիստր Տօնչեվը, գլխաւոր շտաբի կառավարիչ Ֆիչեվը, հրապարակախօս Խադեվը և այլն։

—

Բէլգրադ.—Բանակցութիւնները Բուխարէստում կը սկսվեն յուլիսի 16-ից։

—

Բէլգրադ.—Բանակցութիւններ վարելու համար յուլիսի 14-ին Բուխարէստ են գնում Սերբիայի լիազօրները՝ գլուխ ունենալով Պաշիչին։

—

Սկոպլէ.—Յուլիսի 12-ի կէսօրվանից պատերազմական գործողութիւնները դադարեցին ամբողջ գծի վրա։ Լուր է պատում, որ երեքօրեայ զինադադար է տեղի ունեցել։

—

Աթէնք —Վէնիզելօսը գնում է Սալօնիկ, որտեղից, թագաւորի մօտ ունկընդրութիւն ունենալուց յետոյ, կուղևորվի Բուխարէստ։

—

Բէլգրադ.—Հաղորդում են, որ բանակցութիւնները Նիշում պատերազմական գործողութիւնները դադրեցնելու մասին կարող են և տեղի չունենալ։ Սերբիան պաշտպանելով (...) առաջարկը զինուորական գործողութիւնները զինադադարը կայացնելուց առաջ դադարեցնելու մասին՝ ցանկութիւն յայտնեց, որպէս զի կամ բոլոր հարցերը—քաղաքական ու պատերազմական—քննութեան ենթարկվեն Բուխարէստում, կամ թէ Նիշում կայացվի նախնական հաշտութիւն, որից յետոյ կարող են դադրեցվել պատերազմական գործողութիւնները։ Այսօր ապասվում է Բումինիայի պատասխանը։ Բաւարար պատասխան ստացվելու դէպքում հաշտութիւն կայացնող պատուիրակները անմիջապէս կուղևորվեն Բուխարէստ։ Եկան բումինական զինուորական պատուիրակ Կօանտան և յունական պատուիրակ Պանասը։ Լուրերի համաձայն՝ ապասվում է Վենիզէլօսը։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 և 14 յուլիսի

Սօֆիա.—Յուլիսի 11-ին ամբողջ ճակատամասի վրա հանգստութիւն է տիրում։ Վլասինի մօտիկ սերբերը փորձեցին յարձակման դիմել, որպէս զի նորից անցնեն բոլգարական սահմանը, սակայն թնդանօթային կրակով յետ մղվեցին։ Կօչանիկի կուսում, յուլիսի 10-ին սերբերն ու չերնոգօրցիները անգամ կորուստներ են ունեցել. ձախ թևի առաջ դուել են 800 դիակ, աջի առջև 1210, որոնց թիւումը օֆիցէր։ Պանչէվի մօտ ճակատամասում յոյները փորձեցին յարձակման դիմել, բայց յետ մղվեցին ու նահանջեցին։

Սօֆիա.—Կայացաւ կանանց բազմամարդ միտինգ քննելու Բոլգարիայի ներկայ ծանր վիճակը շնորհիւ թշնամի զօրքերի գործած անգթութիւնների։ Որոշվել է դիմել Լօնդոնի կոնֆերէնցիային և պետութիւնների Սօֆիայի ներկայացուցիչներին խնդրելով միջամտել։

«Բոլգարական էխօ» լրագիրը յայտնում է, որ սերբերի և յոյների միջև լուրջ ընդհարումներ են սկսվել Գեվգելիին տիրելու համար։ Յունաստանը իբր թէ հակառակում է պատերազմական գործողութիւնների դադարեցնելուն իր դաշնակից Սերբիային ուժասպառ անելու նպատակով, որպէս զի յետոյ նրանից մեծ զիջումներ կորզէ նուաճված շրջանները բաժանելու միջոցին։

—

Աթէնք.—Աթէնական գործակալութիւնը հաղորդում է, որ Դէդէ-Աղաջը գրաւված է յունական ռազմանաւատորմով մասամբ ռազմական դիտումներով, նոյնպէս և Թրակիայի յունական ազգաբնակութիւնը պաշտպանելու բոլգարական զօրքերի բռնութիւններից։ Դէդէ-Աղաջի մի մասը հրդեհել են բոլգարները, որոնք գերի են տարել Մաքրից և Կսանթից յունական 100 նօտարներ, իսկ միւսներին սպանել են։ Դէդէ-Աղաջը գրաւելու պատճառներից մէկն էլ թիւրքական արշաւանքների երկիւղն է։

—

Բէլգրադ.—«Պօլիտիկա» լրագրի տուած տեղեկութիւնների համաձայն, Սերբիան պահանջելու է զիջել Հին-Սերբիայի և Մակեդոնիայի այն ամբողջ շրջանները, որ երկրորդ անգամ գրաւված են սերբական զօրքերով, ուղղել յառաջակի թիւրիմացութիւններ պատճառող հին սահմանը, և զինուորական կօնտրիբուցիա։

—

Բէլգրադ.—Սերբական «Պրէս-Բիւրօն» վճռականապէս հերքում է մամուլի տուած այն տեղեկութիւնը, թէ Սերբիան և Յունաստանը համաձայնութիւն են կապել Թիւրքիայի հետ Բոլգարիայի դէմ պատերազմական գործողութիւնների համար։

—

Վիէննա.—«Ցէյտ» լրագրի ասելով, զինուորական մինիստրն ու Բերխտոլդը արտակարգ նիստ ունեցան, որին լաւատեղեակ շրջաններում մեծ նշանակութիւն է տրվում։

Պահեստի զինուորներին զէնքի կանչելու մասին տարածված լուրերի առիթով, լաւատեղեակ աղբիւրից հաղորդում են, որ զօրակոչ չը կայ։ Այդ տեսակ լուրերը առաջ են եկել նրանից, որ շատ տեղերում օգոստոսի 20-ին յարմարեցված է զինուորական պէտքերի ձիերի ցուցակագրութիւնը և պահեստի զինուորները կանչվում են սովորական վարժութիւնների։

—

Լօնդոն.—Ռէյտէրը հաղորդում է, որ մեծ պետութիւնների դեսպանները կը դիմեն իրանց պետութիւններին՝ Թիւրքիային նոր նոտա ներկայացնելու առաջարկութեամբ։ Հարց ծագեց նոյնպէս ծովային ցոյց անելու և ներգործելու ուրիշ միջոցներ ձեռք առնելու մասին։ Դիպլոմատներից մի քանիսի կարծիքով միանգամայն բաւական է ֆինանսական ներգործութեան միջոցը։ Ռուսաստանի տեսակէտը տարբերվում է միւս պետութիւնների հայեացքներից շնորհիւ իր առանձնայատուկ շահերի։ Ռուսաստանը յայտնում է, որ չէ կարող թոյլ տալ օսմանեան ըէժիմի վերականգնումը այն շրջաններում, որտեղից Թիւրքերը մի անգամ արդէն հալածված են եղել. ուստի Ռուսաստանը հարկադրված կը լինի նախաձեռնել քայլեր՝ հեռացնելու Թիւրքական զօրքերը այդ շրջաններից. եթէ բոլոր պետութիւները միաբան ոյժերով անելու չը լինեն այդ քայլերը։ Ռուսաստանը յամենայն դէպս չի դիմի այնպիսի գործողութիւնների, որոնք կարող են թիւրիմացութիւններ ստեղծել պետութիւնների միջև։

—

Բուդապեշտ.—«Բուդապեշտ» լրագրի ասելով, աւստրիական զօրքերը անկասկած Սանջակ կը մտնեն, եթէ Սերբիան և Յունաստանը չը չափաւորեն իրանց պահանջները։

ԹԻՒՐՔԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
13 և 14 յուլիսի

Կ. Պոլիս.—Ներքին գործերի մինիստրը Պետ. Հեռ. Գործ. Թղթակցի հետ խօսելիս յայտնել է, որ Թիւրքիան վճռել է իր ձեռքում պահել Ադրիանուպօլիսը և Մարիցայի հոսանքի սահմանագիծը, որ բնական սահման է կազմում։ Մինիստրի ասելով, Ադրիանուպօլսում ամենքն էլ, առանց բացառութեան նաև քրիստոնեայ ազգաբնակութիւնը, ուրախութիւն են յայտնել իշխանութիւնը օսմանեան կառավարութեան ձեռքն անցնելուն համար։ Նրա ասելով, Թիւրքիայի հատատուն որոշումը՝ Թրակիան չը վերադարձնելու մասին՝ ուղղված չէ Ռուսաստանի դէմ, որի հետ Թիւրքը կառավարութիւնը ցանկանում է լաւագոյն բարեկամական յարաբերութիւններ պահպանել։

—

Կ. Պոլիս.—Ադրիանուպօլսի նահանգապետ Հայլի-Ադիլը հեռագրեց Բ. Դրանը իր տեղը հանձնելու և ազգաբնակութեան կողմից ցնծութեամբ ընդունվելու մասին։ Սուլթանը նուիրեց Ադրիանուպօլսի ամենաաղքատ բնակիչներին 2000 թիւրքական լիրա։ Թիւրքական զօրքերի՝ Դէդէ-Աղաջ մտնելու առիթով բոլգարական մինիստր Գենադիեվի բողոքին մեծ վեզիրը պատասխանեց, որ մի քանի թիւրքական պահակներ, որոնք անցել էին բոլգարական սահմանը, յետ են կանչված։

Սուլթանը այցելեց Թոփ-Կափու պալատը Ադրիանուպօլսի առման առիթով մարգարէի վերարկուին երկրպագելու և գոհացողական աղօթք անելու համար։

—

Սօֆիա.—Թիւրքերը զօրք իջեցրին Վասիլիկօյում։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Պարիզ, 17 յուլիսի (Ն. տ.)

Հաղիւ թէ Թիւրք-բալկանեան պատերազմը վերջացել ու խաղաղութեան նախապայմանները առորոշված էին Լօնդոնում, անա թնդանօթը դարձեալ որոտում է Բալկաններում և ամբողջ Մակեդոնիան ծածկում մարդկային հեկատոմբներով։

Բոլգարիան, Սերբիան, Յունաստանը և Մոնթենեգրօն, մի քանի կերպով, յանուն ազգերի ազատագրութեան և արևմտեան քաղաքակրթութեան, խաչակրութիւն յայտարարեցին Թիւրքիայի դէմ։ Եւրօպական հասարակական կարծիքը, մանաւանդ Ֆրանսիայինը, ջերմ համակրանքով ողջունեց դաշնակից ոյժերի տարած յաղթանակները, ընդունելով որ արևելեան խնդրի միակ գործնական ու արդար լուծումը «Բալկանները՝ բալկանցիներին» սկզբունքն է։

Երկու շաբաթից ի վեր, սակայն, ազատագրական կռիւ այդ երկվայ եղբայրները՝ սանձարձակ կատաղութեամբ ու չը տեսնված վայրագութեամբ՝ կոտորում ու ջարդում են միմեանց՝ նուաճված երկիրները, որպէս մի ճոխ աւար, իրար ձեռքից յափշտակելու համար։

Հասկանալի է թէ՝ նոյն հասարակական կարծիքը, որ այնքան ոգևորութեամբ ու հիացմունքով ծափահարում էր բալկանեան պետութիւնների դաշնակցութիւնը, նրանց ձեռք բերած անսովոր աջողութիւնները, չէր կարող յուսախաբութեան դառն զգացումով ու զղջանքով չընդունել այն եղբայրասպան կոտորածը, որ այսօր խորտակում է կնքված մխիթիւնը և տակրացնում իւրաքանչիւրին անհատապէս։

Հոդեկան և մտային այս վիճակն է, որ արտայայտեցին ֆրանսիական մամուլի բոլոր օրգանները, որոնք մոռանալով արտաքին քաղաքականութեան միւս բոլոր խնդիրները՝ ամբողջովին զբաղված են այժմ բալկանեան արիւնահեղ անցքերով*)։

Թէ ինչպէս ծագեց այդ պատերազմը, այդ մասին «Մշակի» ընթերցողները արդէն ծանօթ են։ Պատճառները ինքնին աւելի խորն են, քան ինչ որ կարծվում է։ Սերբերի և բուլգարների միջև ցեղային սուր հակամարտութիւն է եղել, շնորհիւ իրանց հետապնդած իմպերիալիզմի պատմական միևնոյն իդէային։ Սերբերը երազել են միշտ Մեծն Դուշանի կայսրութիւնը վերահաստատել Բալկաններում, իսկ բուլգարները՝ Սիմէոն ցարի հիմնած Մեծ Բուլգարիա։ Նոյների և բուլգարների միջև եղած հակամարտութիւնը ըղձել է կրօնական բաժանման ու անկախութեան պահանջից։ Ցունական կղերակայութեան, գլխաւորապէս Ֆանարի խաղացած դերը բուլգարների մէջ՝ դարերի ընթացքում՝ այն աստիճան բուռն ատելութիւն է յարուցել, որ մինչև այժմ՝ բուլգարական կրօնական ու քաղաքական անկախութիւնից յետոյ էլ՝ արիւնահեղ միջադէպերը անպակաս են եղել։

Թիւրքիայի դէմ մղված պատերազմի աջողութիւնները, առաջ եկած ազգային խանդավառութիւնն ու գինովութիւնը իւրաքանչիւրի մէջ արթնացրին նուաճման, ցեղային մեծութեան ու հեգեմոնիայի ցնորքները։ Ցունական «մէղալօ էդէան» իր մէջ ընդգրկում է ամբողջ Եպիրոսը, Մակեդոնիան, Թրակիան, Կ. Պոլիսը, Արշիպելագոսեան կղզիները և Փոքր-Ասիայի ափերը։ Սերբական terra irredenta-ն տարածվում է Բոսնիա-Հերցեգովինայից մինչև Կ. Պոլիս։ Իսկ բուլգարական նացիոնալիզմը Բուլգարիայի սահմանների մէջ ամփոփում է Արևելեան Սերբիան, Եպիրոսը, Մակեդոնիան և Թրակիան։ Էմպերիալիզմի այս հակամարտ ձգտումներն էին, որ դարաւոր թշնամու պարտութիւնից յետոյ՝ բորբոքեցին ու յուզեցին կրքերը, առաջ բերելով լարված մի տրամադրութիւն, ռազմական մի հոգեբանութիւն, որ դիւրաւ տեղի տուեց արիւնահեղ ընդհարումների։ Կառավարութիւնները չը կարողանալով այլևս զսպել շղթայազերծ եղած շովինիստական ախորժակները, պատերազմը դարձաւ անխուսափելի։

Նուաճման ու տիրապետութեան այդ ընդհանուր տենչանքի մէջ, Բուլգարիան ամենից յախուռն ու ամենից յանդուգն էր, շնորհիւ վերջին պատերազմի մէջ շահած իր փառաւոր յաղթանակների։ Միւս կողմից, Բուլգարիան Բալկաններում եղել է միակ երկիրը, ուր զինուորական կուսակցութեան ու մեկէօնական կոմիտաջիների ազդեցութիւնը գերակշիռ դեր է ունեցել ներքին ու արտաքին քաղաքականութեան մէջ։ Կարելի է ասել նոյն իսկ, որ կառավարութիւնը յաճախ նրանց ձեռքում գործիք է եղել։ Բալկանեան պատերազմի մէջ թափված արտակարգ ճիգերը, հսկայ տարածութեամբ գրաւած հողերը Բուլգարիային առաջնակարգ դիրք էին տուել, որից նացիոնալիստական այդ տարրերը օգուտ քաղելով՝ ցանկացան պրուսական մի գերակշռութիւն հիմնել Բալկաններում՝ ի վնաս դաշնակից միւս պետութեանց։

Դրանով է բացատրվում յունիսի 17/30-ի բուլգար բանակի գործած յանկարծական յարձակումը սերբերի և յոյների վրա, մի յարձակում, որ, ինչպէս այժմ յայտարարում է բուլգար կառավարութիւնը, իրան լիովին անծանօթ է եղել։

Ֆրանսիական մամուլը, ինչպէս տասցի վերևում, քննադատելով ներկայ պատերազմը որպէս եղբայրասպան մի ոճիր, պատասխանատուութիւնը ծանրացնում է ընդհանրապէս Բուլգարիայի և մասնաւորապէս Ֆերդինանդի վրա, անուանելով այդ յարձակումը որպէս նենգամիտ ու դաւաճան մի ապարք, որ պատուեց, ոչնչացրեց Սերբիայի հետ կնքված 1912-ի դաշինքը։

Այդպէս են տրամաբանում պահպանողական և առաջադիմական մամուլի բոլոր օրգանները, բացառութեամբ «Radical»-ի և «L'Humanité»-ի, որոնք պատերազմի նախաձեռնութիւնը վերագրում են Սերբիային և Ցունաստանին, որովհետև սրանք ռուսական իրաւախոհութիւնը բուլգար-սերբական դաշնագրութեան հիմքի վրա չընդունեցին։

Պէտք է աւելացնել նոյնպէս, որ եթէ ֆրանսիական մամուլը դատապարտում է Բուլգարիային, դա միմիայն յունիսի 17-ի յարձակման համար չէ։ Բուլգարիան, նրա կարծիքով, չափազանց մեծ սխալ գործեց յենվելով երրեակ նիզակցութեան, գլխաւորապէս աւստրիական քաղաքականութեան վրա. մի հանգամանք, որ նպատակ ունէր խեղդել Սերբիայի և Ցունաստանի դիմադրութիւնը։

Ահա թէ ինչ է գրում այդ մասին Ժօրժ Կլեմանսօն, Ֆրանսիայի նախկին մինիստր-նախագահը.

«Բուլգարիայի Ֆերդինանդը նման է այն խաղամոլներին, որոնք հեշտութեամբ կըբկնազատվում են խաղի գումարը։ Հրաշալի մի ճիգով՝ չը յուսացված մի դիրք էր գրաւել նա, ուսի սիպաղոսական պարաք էր ծանրանում նրա վրա՝ բարեկամական անհրաժեշտ կարգադրութեամբ՝ ամրապնդել այն դիրքը։ Սակայն նա ոչինչ չուզեց հասկանալ։ Ցոյս դնելով Աւստրիայի վրա, որը սպանալիքով իր յուսացածից աւելին ձեռք բերեց Եւրոպայից, նա կարևորութիւն չընծայեց մեծ պետութիւններին և իր դաշնակիցներին և, ի վերջոյ, մի խենթ արկածախնդրութեան մէջ նետվեց ու դաւաճան յարձակումով՝ իր դէմ լարեց եւրոպական ամբողջ հասարակական կարծիքը։ Նա ցանկացաւ Պրուսիայի դերը խաղալ, բայց Բիսմարկն ու Մոլտկէն պակասեցին նրան...»։

Անուրանալի փաստ է և այն, որ բուլգարական յարձակումից շատ առաջ՝ Սերբիան և Ցունաստանը Բուլգարիայի դէմ մի համաձայնութիւն էին կնքել, որով նրանք իրանց միջև բաժանել էին գրաւած երկիրների մի մասը։ Բայց այդ համաձայնութեան, երկու պետութիւնների սահմանները պիտի կազմեն Վարդարի հարաւային մասը։ Մօնասթիրն ու Զէվջէլին պիտի պատկանեն Սերբիային, իսկ Սէրէսը, Կավալան, Թասոս կղզին՝ Ցունաստանին։ Այս համաձայնութիւնը ինքնին մի թշնամական քայլ էր Բուլգարիայի դէմ, քանի որ բալկանեան դաշնակցութիւնը դեռ խախտված չէր։ Ֆրանսիական մամուլը երբեք նկատողութեան չէ առնում այդ իրողութիւնը, ինչ որ սակայն ցոյց է տալիս թէ՝ ներկայ պատերազմը աւելի շուտ պետական հեգեմոնիա նուաճելու ձգտումով է առաջ եկել։

Այժմ, որ պատերազմի բաղդը որոշվել է ի նպաստ Սերբիայի և Ցունաստանի, որ Ռումինիան և Թիւրքիան զինեալ միջամտութեամբ հրապարակ են իջել և Բուլգարիան դիմել է Ռուսաստանի հովանաւորութեան՝ պատերազմին վերջ տալու համար, Ֆրանսիական մամուլը սկսել է յորդորներ կարդալ Սերբիային և Ցունաստանին, որ չափաւորեն իրանց պահանջները և վերջ տան պատերազմական գործողութեանց։ Այդ առիթով, նաև ցաւով հաստատում է այն իրողութիւնը, որ բալկանեան պետութիւնները այսօր ազատվել են Եւրոպայի խնամակալութիւնից, որը նրանց համար այլ ևս մի մեռած ֆիկցիա է։ Պատճառը, նրանց կարծիքով, այն է, որ բալկանեան պետութիւնները, ունենալով մէկ միլիոնից աւելի մի բանակ, իրանք իրանց ընդունակ են զգում բալկանեան հաւասարակշռութիւնը վերահաստատելու ու ամրապնդելու։ Նոյն իսկ կիսապաշտօնական օրգան «Temps»-ը իր այսօրվայ համարում յայտնելով որ Ռուսաստանը իրաւախոհն, միջնորդի դեր չունի, այլ բուլգար կառավարութեան porte-parol-ն (բանբերը) է միայն, բալկանեան այդ ազատագրութեան մասին հետևեալն է ասում.

«Եւրոպայի խնամակալութիւնը այլ ևս անհետացել է։ Պետութիւնները կարող են միայն բանակցել քաղաքացիական հասուն նութիւն ձեռք բերող երկիվայ անչափահասների հետ. նրանք այլ ևս չեն կարող կառավարել նրանց ստացուածքը։ Ֆրանսիան ակնյայտնի շահ ունի ճանաչելու և յայտարարելու այդ սկզբունքը»։

Նոյն թերթը գրաձեալ յայտնում է, որ երրեակ համաձայնութիւնը ոչ մի շահ չունի խաղաղութեան պայմաններ հարկադրելու։ Խօսքը պատկանում է միայն պատերազմող կողմերին։

Այսու հանդերձ, ամբողջ մամուլը շեշտելով խաղաղութեան անմիջական անհրաժեշտութիւնը՝ յաղթող կողմերին յիշեցնում է, որ, իրական հաւասարակշռութիւն հաստատելու համար, պէտք է խուսափել ծայրայեղ պահանջներից, այլապէս բուլգարական օրինակը կարող է կրկնվել և իրանց վերաբերութեամբ։

Այդ տեսակէտից, Սերբիայի պահանջները —մինչև Վարդարի հովիտը նա գանում է չափաւոր և այդ հանգամանքը վերագրում է Պաշիչին, որ պատասխանատու հասարակութեան ջատագովն է համարվում։ Ինչ վերաբերում է Լազօսի ծոցին, որ Եգէյան ծովի վրա է, պարզվեան դիւանագիտական շրջանակները չեն կարծում, որ Սերբիան յամառի անհաշտ դիրք բռնելու։

Զափազանց խիստ քննադատվում է Ցունաստանի դիրքը, որ առանց զինուորական մեծ ջանք գործ դնելու՝ պահանջում է ոչ միայն ամբողջ Եգէյեան ծովափը, այլ և պատերազմական մի տուգանք ու մասնաւոր առանձնաշնորհումներ՝ Բուլգարիայում ապրող յոյների համար։ Բոլոր թերթերը շատ ճիշդ նկատում են, որ Ցունաստանի այդ յաւակնութիւնը ապագայում շատ թանգ կարող է նստել իրան։

Թիւրքիայի միջամտութիւնը ֆրանսիական դիւանագիտական շրջանակների ու մամուլի համար մեծ բարդութիւն չէ ներկայացնում, որովհետև Էնոս-Միդիայի գիծը որպէս սահման վերջնականապէս ընդունված ու ճանաչված է մեծ պետութեանց հաւաքական որոշումով։ Թիւրքիան եւրոպական խնամակալութիւնից ազատված չէ և, հետևաբար, կարծվում է, որ նա չէ կարող եւրոպական որոշումները ոտնատակ անել, առանց նոր բարդութիւնների տեղի տալու։ Սըր Էդուարդ Գրէյի վերջին յայտարարութիւնները այդ կողմից պարզ և որոշ են։

Ինչ վերաբերում է Ռումինիային, ֆրանսիական կարծիքը գանում է, որ նա իր կանոնաւոր եկամուտքով ու զինուորական հատատ կազմակերպութեամբ կոչված է Բալկաններում մեծ դեր խաղալու։ Հեռու լինելով նուաճման քաղաքականութիւնից, նա ցանկանում է միայն բուլգարական հաւանական յարձակման դէմ ռազմագիտական մի սահմանագիծ ապահովել և, իբրև բալկանեան մի պետութիւն, իր ձայնը ունենալ այն բոլոր հարցերի կարգադրութեան մէջ, որոնք բալկանեան հաւասարակշռութեան առանցքն են կազմում։ Այդ տեսակէտից, Ռումինիայի միջամտութիւնը օրինական ու արդարացի է համարվում և Բուլգարիան պարտաւոր է Տուրտուկայ-Բալչիկ գիծը նրան զիջելու։

Մի քանի թերթեր միայն՝ Ռումինիայի այդ միջամտութիւնը նկատեցին որպէս շանտաժ ու աւազակութեան մի զզուելի միջոց ընդդէմ Բուլգարիայի, որ սարսված միայնակ է ճակատելու յոյն-սերբական գրոհի դէմ։

Աչքի առաջ ունենալով բուլգարների արտաքին տագնապալից կացութիւնը և ներքին յեղափոխութեան երկիւղը, ֆրանսիական պաշտօնական շրջանակների կարծիքով, մօտաւորապէս 8 օրից յետոյ խաղաղութեան նախապայմանները կը ստորագրվին։

Ե. Սաֆրաստ

*) Ծագած այդ բարդութիւնների հետևանքով հայկական հարցը մոռացութեան է դատապարտվել հասարակական կարծիքի կողմից, և մամուլն էլ այլևս ուսումնասիրութեան ու վիճաբանութեան նիւթ չէ դարձնում այն։ Ցաւալի զուգադիպութիւն, որ դժբաղդաբար հայկական հարցի արծարծման ժամանակ մինչև այժմ գրեթէ միշտ կրկնվել է։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԵԱՏ ԳՈՐԾԻՉ

(Էսկիզ)

—

Նուէր մեր օրջանաւարտներին

Աջողութեամբ տուեցի վերջին քննութիւնս և ուրախ-ուրախ վերադարձայ տուն։

Հայ միջնակարգ դպրոցն էի աւարտել. սրտիս վաղուցվայ փափաքն էր կատարված...

Ուրախ էի, անչափ ուրախ... լցված ապագայի քաղցր յոյսերով ու տենչերով։

Ինչո՞ւ չէին անցնում մաքովս. ինչ դրութեամբ ու դիրքով միայն չէի երևակայում ինձ...

Ես ամէն բան էի. ես ամէն բան գիտէի, ես ամէն բան կարող էի դառնալ...

Այդ օրը ամէն ինչ ինձ համար գեղեցիկ էր, վառ, կարմիր, սիրուն, իրագործելի...

Ի՞նչ էր կեանքը ինձ համար այդ օրը— ոչի՛նչ. ոչնչութիւն...

Ես իմ դպրոցական կարմիր իդէալական երազներով կը յաղթէի բոլորին...

Այդ ամբողջ գիշերը ես քնել չը կարողացայ...

Մի քանի օրից՝ վերջին անգամ պէտք էր տաք դնէի դպրոց, աւարտման վկայականս ստանալու համար։

Դպրոցի բակումն եմ. բոլորս ուրախ ենք, խօսում, հանաքներ անում, իրար ոգևորված պատմում ապագայ անելիքների ու ծրագիրների մասին։

Մեզ դահլիճ կանչեցին. դուրս եկաւ մեր առաջ մեր սիրված տեսուչը և առաց մօտաւորապէս հետևեալը.

— Ընկերներ, այսօրվանից ընկերներ եմ անուանում ձեզ և ոչ աշակերտներ, աւարտելով դուք մեր այս դպրոցը, այսօրվանից ոտք էք դնում մի ուրիշ աւելի դժուարին, աւելի պատասխանատու դպրոց, որ կոչվում է կեանքի դպրոց։ Որպէսզի այդ դպրոցում ապրէք իբրև արժանաւոր քաղաքացիներ, անշուշտ պէտք է գործածէք մեր այս դպրոցում ձեզ տուած զէնքերը և այդ զէնքերով կռւէք մինչև ձեր կեանքի վերջը։ Բայց ի նկատի ունեցէք, սիրելի ընկերներ, որ այդ կեանքի դպրոցում շատ յաճախ ձեր դպրոցական գաղափարները կընդհարվեն իրականութեան հետ և հակասութիւններ կը նկատէք։ Ցաճախ ձեր աչքերը փակել կուզեն պարզ լոյսի առաջ. սակը՝ սպիտակի տեղ ծախել. արդարութեան, ճշմարտութեան մէջ կասկածներ յարուցանել. չը լինի թէ մի բոպէ ընկճվի՛ք, չը լինի՛ թէ մի բոպէ մոռացվէք, չը լինի թէ վար դնէք ձեր զէնքերը։ Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ. գործադրեցէք այդ զէնքերը մինչև ձեր կեանքի վերջը. գործադրեցէք այն անվախ, համոզված... Թող երբէք չընկճեն ձեզ կեանքի ձախորդութիւնները, անաջողութիւնները և կամ թէ կեանքի կեղծ, խաբուսիկ երևոյթները. միշտ գիրքը, այո՛, միայն գրքի ճշմարտութիւնները, դպրոցական կարմիր դաղափարները, ուրիշին սիրելու, ուրիշի համար գործելու և ուրիշի համար ապրելու դաղափարները գրկած՝ անվախ առաջ դնացէք... Այո՛, ձեր այդ նոր դպրոցում ապրեցէք ուրիշի, հասարակութեան համար...

Նա կանգ առաւ։

Մենք ոգևորվել էինք. տեսչի ամեն մի խօսքը ցցվել էր մեր սրտերում։

Կողքիս կանգնած ընկերներից մէկը մի ինչ-որ բան փնթփնթաց. նայեցի և ինչ... արտասուք նկատեցի նրա աչքերում...

Ռուբէն Օհանեանն էր, միշտ լուրջ, միշտ մտաղրաղ, միշտ կարդացող, բայց և միշտ դիւրագրգիռ մեր ընկերը...

Աւարտման վկայականները մենք ուրախ, ոգևորված, զմայլան բացագանչութիւններով դուրս եկանք դպրոցի բակը. խօսում, զրուցում, պատմում էինք իրար՝ ապագայ անելիքների մասին...

— Տղերք, — խօսեց յանկարծ Ռուբէնը, — ես այսօր գնում եմ հայրենիք, բայց նախ քան գնալս ուզում եմ մի երկու խօսք ասել ձեզ։ Տղերք, ես այսօր չափազանց զգացված եմ մեր տեսչի խօսքերից և ես այսօր ձեր առաջ խօսք եմ տալիս, երդվում եմ իմ հոգուս հայրերը նուիրել հասարակութեանը, և, սիրելի ընկերներ, թոյլ տուէք իմ այս երդումը կնքել ձեր ընկերական համբոյրներով...

Ռուբէնը մօտեցաւ և ջերմ համբոյրներ դրոշմեց ամէն մէկիս շրթունքներին...

Մենք լսեցինք նրան, բայց առանձին ուշադրութիւն չը դարձրինք նրա խօսքերին։

Դարձեալ խօսք, ծիծաղ, ուրախութիւն, բացագանչութիւններ...

Ես աչքիցս բաց չէի թողնում Ռուբէնին. նրա ասածները մտածել էին տուել ինձ. ես հետևում էի նրան...

Ռուբէնը շտապ բարձրացաւ վերև, նորից իջաւ բակը, խօսեց տեսչի հետ, նորից բարձրացաւ վերև, համբուրեց փողոցը տանող դպրոցի պատը և դուրս գնաց...

Ես այլևս նրան չը տեսայ...

—

Անցան տարիներ, երկար և ձիգ տարիներ։

Դպրոցական ընկերներս ցրված էին զանազան կողմերը, զանազան պաշտօններով՝ ուսուցիչ, հոգևորական, բժիշկ, վաճառական և այլն. ուշ-ուշ էինք պատահում իրար. ընկերներին պատահելու կենտրոնը Թիֆլիսն էր...։

Ամեն անգամ ընկերներից մէկին ու մէկին պատահած ժամանակ միշտ հարցնում էի Ռուբէնի մասին, սաստիկ հետաքրքրվում էի նրանով... թէև յաճախ զրկեստներ էի կարդում հայ լրագիրներում նրա մասին։

— Այն ինչ քաղաքում սիրված ուսուցիչ է և համեստ, գործունեայ անդամ հասարակութեան,— ահա այն կարճ պատասխանը, որ տալիս էին ընկերներս նրա մասին։

Անցնում էին տարիները, և ես չէի կարողանում պատահել Ռուբէնին։

Մի երեկոյ պարապելուս ժամին բերեցին պօստը. բաց արի ծրարներից մէկը և մէջը մի պատկեր գտայ...

Կնճռոտված, նիհարած, յոգնած մի դէմք էր, երկար զանգուր մազերով, որոնց մէջ սպիտակներ էին երևում... Նայեցի պատկերի տակը և ինչ... Խոշոր տառերով գրված էր «Ռուբէն Օհանեան»...։ Շուռ տուի պատկերի միւս կողմը. յօբելեանական հրաւէր էր. յիշված էր նրա՝ հասարակութեանը արած ծառայութիւնները մի առ մի—ազնիւ, պարտաճանաչ ուսուցիչ, թղթակից, սիրող, հմուտ գրադարանի, դասախօս և պիտանի ու գործունեայ անդամ այլ և այլ մանագրութիւնը վերացնելու գործում, բողոքում է հակա-սահմանադրական կառավարչական յանձնաժողովի դէմ, կոչ է անում չեխական բոլոր կուսակցութիւններին միաբանելու, ընդգծում է ընտրողական բարենորոգումների անհրաժեշտութիւնը դեմօկրատիկ ոգով։ Չեխական ամբողջ մամուլը ուռնոգով բողոքում է Չեխիայում մղացրած բացառիկ միջոցների դէմ։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 և 14 յուլիսի

Տօկիօ.—Լրագիրները գրում են, որ եապօնական նոր դեսպանին Մեքսիկայում դիմաւորել են արտասովոր հանդիսաւորութեամբ։ Ամբոխը ողջունել է նրան եապօնական դրօշակներով։ Դեսպանը իր ճառում շեշտել է Մեքսիկայի և Եապօնիայի միջև աւելի սերտ բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու անհրաժեշտութիւնը։

Լօնդոն.—Բէյտերին հեռագրում են Շանխայից. «Յեղափոխութեանը յարած ականաւոր հասարակական գործիչների խորհրդակցութիւնը հեռագիր ուղարկեց Բանշիկային՝ առաջարկելով խաղաղ բանակցութիւնների հիմնական պայմանները»։

—

Շանխայ.—Հարաւայինները վերադարձան հին դիրքերը։ Կռիւը շարունակվում էր ամբողջ գիշերը. նա թէև կատաղի էր, բայց և այնպէս վճռական արդիւնք չը տուեց։ Պաշտօնապէս հաղորդվում է, որ Սուչժօուֆուն հիւսիսայինների ձեռքումն է։ Լուր է պտտում, որ գեներալ Խուանսինի գլխի համար նշանակված է 20,000 տայել։ Յեղափոխական լրագիրներից շատերը փակված են։

—

Զիֆու.—Հիւսիսից եկան և անցան դէպի հարաւ շոգենաւերով մեծ քանակութեամբ զօրքեր։

—

Լօնդոն.—Բէյտերին Շանխայից հեռագրում են, որ հիւպատոսների և քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչների խորհրդակցութեան ժամանակ որոշված է պատերազմական նաւերից նաւատներ ափ իջեցնել եւրոպական կօնցեսիաները պաշտպանելու նպատակով։

Վուզուանեան ծովային բերդերը յուլիսի 12-ին անցան կառավարչական զօրքերի ձեռքը, բայց ապստամբները նորից յետ խլեցին։ Ապստամբ զինուորների հրամանատարը փախաւ։ Ապստամբները նոր հրամանատար ընտրեցին, որը սակայն մտադիր չէ յարձակման դիմել։ Յատուկ դնացքներ են պատրաստված օտարերկրացիներին հարկաւոր դէպքում Վուզուանից դուրս տանելու համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻՑ

(Յունիսի 27—30, 1913 թ.)

—

Ռուսաց լեզուով լոյս տեսաւ Ալէքսանդրոպօլի ցուցահանդէսի երկրորդ տեղեկագիրը (Н бюллетень). Նրանից հաճաւոատպէս քաղելով՝ մենք տարև տալիս ենք մի ամփոփ տեղեկութիւն «Մշակի» ընթերցողներին՝ ցուցադրված անասունների տեսակներին, քանակի և էքսպէրտների արձանագրութիւններով բաշխված պարգևների մասին։

Մեծատատաը բերել են 12 տեղերից 27 հոգի 84 գլուխ։

Սրանցից եղ՝	38	հատ
կով՝	23	»
երինջ՝	12	»
ցուլ (բուլա)՝	8	»
գոմէշ՝	2	»
	84	

Ձիեր բերել էին 11 տեղից 50 հ. 75 գլուխ
Խոզ » » » 5 » 16 »
Ոչխար » 8 » 5 » 120 »
Այծ (անդօրեան) 8 » 5 » 45 »

Թռչուններ (հաւերէն) 5 տեղերից 19 հոգի և հիմարկութիւններ, 34 վանդակներով, որոնց մէջ 72 հատ մեծահաւեր և 83 ճուտ։

Սիրամարգ՝ մի զոյգ։

Ցազար՝ մի ընտանիք։

Բաշխվեցին հետևեալ պարգևները. ոսկէ փոքր մեդալ՝ 1 հատ, արծաթէ մեծ մեդալ՝ 15 հատ, արծաթէ փոքր մեդալ՝ 39 հատ, զովասանական թերթ 59 հատ։

Այս պարգևները տրվեցին հետևեալ անասունների համար։ Ձիերից ոսկէ փոքր մեդալ՝ Սրանց եղ՝ 38 հատ։

Մեծ մեդալ՝ 15 հատ։

Արծաթէ մեծ մեդալ՝ 15 հատ։

Արծաթէ փոքր մեդալ՝ 39 հատ։

Զովասանական թերթ՝ 59 հատ։

Ձիերից՝ ոսկէ փոքր մեդալ՝ 1 հատ։

Ոչխարներ՝ 1 հատ։

Ոչխարներ՝ 1 հատ։

Ոչխարներ

դայլի արժանացաւ մէկը (Մէս. Զուբկով, Գորելովկա գիւղից և 15 ր. գրամ իր «Դիկա» ձիու համար. արծաթէ մեծ մեդալ՝ 1, արծ. փոքր մեդ.՝ 6, բրոնզեայ մեդ.՝ 14 և գովասանական թուղթ՝ 38 հոգու։

Ձիատէրերը բացի սրանից ստացան դրամական պարգևներ՝ 43 հոգի 5-ական ռուբլի, 11 հոգի՝ 10-ական ր. և 4 հոգի՝ 15-ական ռուբլի։

Խոզերի համար՝ բրոնզեայ մեդալ 3 և գովասանական թուղթ՝ 1։

Ցուլերի համար՝ արծ. մեծ մեդ.՝ 2, արծ. փոքր մեդ.՝ 2, բրոնզ. մեդ. 2 և գովասանական թուղթ 1։

Կովերի համար արծ. մեծ մեդ.՝ 5, արծ. փոքր մեդ.՝ 3, բրոնզ. մեդ.՝ 10։

Մշակ եզների համար՝ արծ. փ. մեդ.՝ 4, բրոնզէ մեդ.՝ 2, գով. թուղթ՝ 3։

Գոմէշ՝ բրոնզ. մեդ. 1։

Երինջների և հորթերի համար՝ արծ. մեծ մեդ.՝ 2, արծ. փ. մեդ.՝ 1, բրոնզէ մեդ.՝ 3 և գով. թերթ՝ 2։

Ոչխարների և այծի համար՝ արծ. մեծ մեդ.՝ 3, արծ. փ. մեդ.՝ 5, բրոնզէ մեդ.՝ 4 և գով. թերթ՝ 4։

Թռչունների համար՝ բրոնզէ մեդ.՝ 3, գով. թերթ՝ 2 և շնորհակալութեան թուղթ՝ 3։

Տնայնագործական, արհեստագործական և երկրագ. գործիքների բաժնում բաշխվեցին 94 պարգևներ. այն է՝ ոսկէ փոքր մեդալ՝ 8 հոգի (եղբ. Ալանակիաններ և Յ. Զանոյեան՝ քարհարների համար, եղբ. Էկիմեան՝ պրէսների, Էդ. Մայլը՝ կառքերի, Ալէքս. քաղաքի կանոնց պրոֆէսիոնալ ձեռագործի համար, տիկ. Ալէքս. Եւանգուլեան՝ պապիէ-մաշէից կերտածների և շերմայի, Վաղ. Ստեփանեան՝ այգեգործական և բանջարաբուծական ապարակի և Թիֆլ. Հայ. Գիւղ. և Տնայն. Ջուլհականոցը)։

Արծաթէ մեծ մեդալ՝ 4 հոգի, արծ. փոքր մեդ.՝ 10 հ., բրոնզէ մեդ.՝ 19, շնորհակալական թերթ՝ 24 և գովասանական թուղթ՝ 29 հոգի։

Տեղեկագրի մանրամասն բովանդակութեան հետ ծանօթանալ ցանկացողը կարող է դիմել ցուցահանդիսի կօմիտոյ Ալ. Քալանթարին և ստանալ տպված բրօշիւրը։

Ն. Ս.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիք կեանքի

Հին-Նախիջևան, 11 յուլիսի

Զահրի (Զահուկ) գիւղում յունիսի 30-ին Միրզա-Դալի-Փիրզուլի օղլին, հասակաւոր անձն, յարմար դէպք գտնելով, բռնի կերպով ւկնում է համագիւղացի 14—15 տարեկան Իսմա-Ալի Նօվրուզ օղլին. յանցաւորը ձերբակալվեց։

Նոյն ամսի 30-ին Աշաղա-ուզունբա թուրք գիւղում Զաֆար-Դալի Քալբալայի-Ալի-բէկ-օղլի տունը կողոպտվում է. գիշերով փողոցի կողմից տան պատի մի անկիւնը կորելով, գողերը ներս են մտնում. տանտիրոջ երկու մեծ դամփռների առաջ երկու ոչխարների մսա գցելով, զբաղեցնում են վերջիններին. կողոպտում ու տանում են 8 հատ գորգեր 400 ռուբլու արժողութեամբ, 6 կապերտ 90 ռուբլի, մի ձիու թամբ 15 ր. և մի մատակ ձի 100 ռուբլի արժողութեամբ, գումարն է 605 ր։ Կասկածով ձերբակալվել են երկու հոգի աշաղա-ուզունօրացիներ։

Լսում ենք, որ 9 հոգի քիւրդ ու թուրք դաշաղներ են անցել Մակուի խանութիւնից մեր կողմերը։

Երաշտի պատճառով հացահատիկների բերքը վատ է։

Ա. Տ.-Ստեփանոսեանց

Դաւանափոխութեան առաջ

Ղալաչա, 5 յուլիսի

Դիմեցիք համախօսականով դիմել են Ղազախի ռուսաց քահանային, որ իրանց օրթոդոքս եկեղեցու գերին ընդունէ. այժմ, ինչպէս իրանց ծխատէր քահանան ասաց, Ղազախից պահանջել են գիւղից ընտրվածներին. անհանգիստ գրութեան մէջ են. յուսահատութիւնից դիմեցին այդ միջոցին. չը գնան՝ վախենում են, գնան՝ ամբողջ գաւառում նախատինքի առարկայ պիտի դառնան։

Ընթերցողը հարց կը տայ, թէ ինչու են դիմեցիք այդ միջոցին դիմել. պատճառը ս. Սարգիս ուխտատեղի արդիւնքն է։ Դիմեցը գաւառս ամենաաղքատ գիւղն է. չունի եկեղեցի, չունի դպրոց. աղքատ են և վերին աստիճանի ապէս. տեսնելով որ իրանց շրջակայ բոլոր գիւղերում դպրոցներ են բացվում, իրանք ևս ինքիր ներկայացրին դպրոց բանալու համար. մի այլ ինդիրքով դիմեցին հոգևոր իշխանութեանը իրանց գիւղի հանդում գտնվող ս. Սարգսի արդիւնքը նորաբաց դպրոցին յատկացնելու։ Սինոդը յարգեց և յատկացրեց յիշեալ ուխտատեղիի արդիւնքը գիւղցիներին, բայց երկար չը տևեց այդ երջանիկ օրը գիւղցիների համար, և ս. Սարգիս ուխտատեղիի արդիւնքը նորից յատկացվեց բարանոցներին։

Շրջակայ գիւղացիներս չենք կարողանում հասկանալ, թէ ինչու միայն բարանոցիք պիտի օգտվեն յիշեալ ուխտատեղիի արդիւնքից. նրա՞ համար, որ հարուստ մարդիկ շատ ունեն և օգնութեան կարիք էլ չունեն։ Մի՞թէ պարծանք է այդ մի բուռն աղքատ և տգէտ գիւղացիներին ճնշել, զրկանքների ենթարկել, որոնք տեսնելով որ ոչ մի հար չունեն արդարութիւնը վերականգնելու, իրանց արդար իրաւունքները պաշտպանելու՝ դիմեցին այնպիսի մի միջոցի, որ պատիւ չի բերում ոչ բարանոցներին և ոչ մեզ՝ շրջակայ գիւղացիներիս. շրջակայ գիւղացիք չեն կարող սառնասրտութեամբ նայել այս եղելութիւնը. բաւական է որքան բարանոցիք օգտվեցին, այժմ էլ պիտի գիւղցիք օգտվեն կամ միւս գիւղի դպրոցները կամ թէ, որպէսզի կուսակցիկ չը լինի, ոչ ոքի չը տալ առայժմ, մինչև կրքերի հանդարտանալը։

Ֆօրատէր

Անմարութեան մի բոյն

Նուխի, 5 յուլիսի

Նուխեցիները, կարծելով որ Նուխին կատարեալ բարեկարգ դրութեան մէջ է, հեռաւոր քաղաքներից ընտանիքներով իբրև ամարանոց գալիս են մի քանի ամիս հանգստանալու։ Սակայն մեր քաղաքը հարիւրաւոր պակասութիւններ ունի. սրանցից ամենանշանաւորներից մին էլ քաղաքացիների չափազանց անմաքրութիւնն է։

Քաղաքի միջից անցնում է կօճան գետը, որը ամառը չորանում է։ Բնակիչները իրանց տան կամ խանութի բոլոր անմաքրութիւնները թափում են գետի մէջ։ Շատերը արտաքնոց չունենալով օգտվում են կօճանից, շատերն ևս աղբանոց չունենալով բոլոր աղբերը, կերակուրների մնացորդ կճէպները, գանգան քայքայված և լուծված իրեր (մի կողմը թողնենք սատկած կատուն, շունն ու մուկը) թափում են այնտեղ։ Եւ այնպիսի մի գարշելի հոտ է բուրում, որ եթէ անսովոր մարդը մի քանի րօպէ այնտեղ կանգնէ, իսկոյն կը վարակվի։

Ահա այդ է պատճառը, որ հիւանդութիւնների թիւ ու համար չկայ (մանաւանդ թուրքերի մէջ) և հիւանդացածներն էլ մեծ մասամբ մեռնում են թոքախտով, երբեմն էլ չը լսված տարօրինակ հիւանդութիւններով։ Քաղաքի աշխարհագրական դիրքին և այգիների ու պարտէզների քանակութեան նայելով, պէտք է որ այդքան հիւանդութիւններ չը լինէին, որքան երևում են այժմ քաղաքի մէջ։

Առհասարակ քաղաքիս օդը առողջարար է, մանաւանդ գարնանը, իսկ քաղ. վարչութիւնը և ժողովուրդը անտարբեր են դէպի մաքրութիւնը։ Այդ անտարբերութիւնն է, որ հասցրել է մեզ հակառողջական դրութեան։

Մենք սովոր ենք ասելու և կը սպասենք, որ մեր քաղ. վարչութիւնը մի օր ուշադրութիւն դարձնէ այդ կեղտոտ փողոցների վրա և հարկ եղած միջոցները ձեռք առնէ։

Մ. Գէորգեան

ԳԱՆՁԱԿԻ ԴԻՊՔԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գանձակ, 11 յուլիսի

Սիալ քայլերը դեռ շարունակում են իրանց վատ ազդեցութիւնն ունենալ տեղիս դպրոցական գործերի վրա։

Դեռ առաջին սիալի տիսուր ազաւորութիւնից չազատված, մենք այժմ ենթակայ ենք Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդի կողմից մի ուրիշ սիալի, այս մէկը աւելի վատ իր հետևանքներով։

Երբ Ա. Զամալեանի միսիան չէ աջողվում և չեն աջողվում նրա դիտումները, առաջնորդն ուղարկում է տեղիս փոխանորդին մի գրութիւն, որով վերջինիս պատուիրում է հրաւիրել նորից ծխ. ժողով, բայց արդէն ոչ նոր հոգաբարձուների ընտրութիւնների նպատակով, այլ եթէ պահանջ լինի, առաջ դնել հին հոգաբարձուների վատահութեան քուէն ու այնուհետև անցնել հերթական հարցերին։ Բացի այդ՝ առաջնորդը իր գրութեան մէջ մի շարք խրատներ տալուց յետոյ՝ յայտնում է, որ նա եթէ գովել է ներկայ հոգաբարձական կազմը, նաև պարտաւել և յանդիմանել է նոյն այդ կազմը...

Ժողովականներից մէկը, պ. Սերեբրեակովն, ասաց հետևեալը. «Պարոներ, մենք միանգամայն անյարմար է կանգնել այդ գրութեան վրա և նրանով ղեկավարվել. մենք ստացել ենք մի գրութիւն, որի մէջ չը կայ մի բան, որով մենք ղեկավարվէինք դէպի խաղ. ղութիւն։ Այդ գրութիւնը մի նոր կուռ պատճառ կարող է լինել... Ես պահանջում եմ իմ բոլոր ասածներս արձանագրել, որպէս զի առաջնորդը ինքն այդ կարդայ»։

Այստեղ նշանակենք մի փաստ ևս, որ նոյնպէս ուշադրաւ է. երբ Արշակ Զամալեանին չաջողվեց գալ Գանձակ և իր դիտումները իրագործել, նա, օգտվելով սրբազանի գրութիւնից, ուղարկել է իր փոքրաւորին, մի ճանրկ-պսալիկ, որի ամբողջ ճոռոմաբանութիւնները ժողովներում հանում են նրան, որ նա առաջարկում է «հարցը կարել» տեղն ու տեղը, այսինքն հեռացնել հին հոգաբարձութիւնը և «գրանով ամէն տարաձայնութիւնների վերջ դնել...»։

Այո, տխուր է մեր իրականութիւնը, տխուր է և հանրզվել, որ ասպարէզը կարողանում են շահագործել բարոյապէս անկարող մարդիկ։

Յովսէփ Տէր-Վարդանեան

ՍԵՆԱՏՕՐ Է. ՎԱՏԱՑԻՆ ՍԵՒԱՆԻ ՎԱՆԲՈՒՄ

Սևան, 10 յուլիսի

Ամսիս 6-ին Սևան այցելեց փոխարքայի օգնական է. Վատացին, որը Նոր-Բայազէտից գալով վերադառնում էր Թիֆլիս։ Նրա հետ էին նաև Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզենը, Դարաչիչագի անտառապետը և այլ բարձրաստիճան հիւրեր։

Ժամը 9-ին վանքի միաբանութիւնը՝ գլուխ ունենալով վանահայր Սարգիս եպիսկոպոսին, ընդառաջ դուրս եկաւ ծովի ափը։ Նաւակը, որով անցնում էր բարձր հիւրը, զարդարված էր դրօշակներով և գորգերով։

Երբ նաւից դուրս եկան, վանահայրը առաջացաւ դէպի բարձր հիւրը և մի քանի խօսքով ողջունեց նրա գալուստը։ Ապա միաբանութիւնը առաջնորդեց նրան դէպի եկեղեցի, ուր նա հարցրեց և տեղեկացաւ հայ եկեղեցու ժամասացութեան մի քանի կարգերի մասին։ Այնուհետև վանահայրը հիւրերին հրաւիրեց իր կացարանը, որը առաջուց պատրաստված էր նրանց գալու առիթով։

Քիչ հանգստանալուց յետոյ, վանահայրը առաջնորդեց նրանց դէպի բլուրը, ուր ցոյց տալով հին վանքերը՝ նրանց մասին կարևոր բացատրութիւններ տուեց Վատացիի հարցերի համաձայն։ Բլուրից ցած գալով՝ հիւրերը դիտեցին վանքի թանգարանը և մատենադարանը, ուր հնութիւնների մասին նոյնպէս մի առ մի բացատրութիւն տուեց վանահայրը։

Հիւրերը հնութիւնները դիտելուց յետոյ ժամը 12-ին հրաւիրվեցին հաշարան, ուր պատրաստված էր նրանց համար սեղան։ Ճաշի ժամանակ ի միջի այլ խօսակցութեան Է. Վատացին պատուիրեց Դարաչիչագի անտառապետին, որ վերջինս հրահանգէ ուղարկէ Սևան՝ հողը դիտելու և նրա համեմատ անտառային պղտատ ծառեր աճեցնելու հսկողութիւն անէ, որի համար վանահայրը շնորհակալութիւն յայտնեց։

Ճաշելուց յետոյ քիչ հանգստացաւ է. Վատացին և վերջը ստորագրութեան մատեանում վանահօր խնդիրքի համաձայն ստորագրեց, շնորհակալութիւն յայտնեց և դոհ սրտով թողեց վանքը։ Վանահայրը հիւրընկալ արեղայի հետ ուղեկցեց նրանց մինչև ծովափ։

Հ.

ՓՈԽԱՐՔԱՑԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Նոր-Բայազէտ, 10 յուլիսի

Ամսիս 4-ին տեղս ժամանեց փոխարքայի օգնական սենատոր Վատացին՝ ուղեկցութեամբ Երևանի նահանգապետ Տիզենհաուզենի և այլ պաշտօնեաների։

Սենատորին դիմաւորելու դուրս էին եկել քաղաքիս համքարները իրանց դրօշակներով և ժողովրդի մեծ բազմութիւն։ Քաղաքային ուաղ Գ. Արծրունին աղ ու հաց մատուցեց՝ բարի գալուստ մաղթելով սենատորին, որը հարց ու փորձ արեց ժողովրդի կացութեան, արդիւնաբերութեան, հասարակական մտաւորութեան, տեղի, կլիմայի, դիրքի և այլ բաների մասին շատ սիրալիր կերպով։ Կէս ժամից յետոյ «ուրա»-ների աղաղակների տակ բարձր հիւրը շարունակեց իր ուղին դէպի Ագրիջայի բարձունքները, ուր այդ հայրաղաքի մարգագետիններում շքեղ վրաններ էին պատրաստված։ Զը նայած որ անձրևը մաղում էր, բայց և այնպէս ժողովուրդը կայարանի մօտ սպասում էր բարի երթ մաղթելու սենատոր Վատացիին դէպի իր ճանապարհորդութեան նպատակէնը՝ Ագրիջա, ուր մի գիշեր անցնելուց յետոյ, մեւ օրը—յուլիսի 5-ին—վերադառնալով դարձեալ մեր քաղաքը՝ շարունակից իր ճանապարհը դէպի Մեծ-Ղարաքիլիսա։

Սենատոր Վատացին խնդիրներ մատուցին թէ քաղաքիս և թէ շրջակայ գիւղաքանների կողմից, որոնց մեծ մասը, ինչպէս իմացվեց, խնդրում է հողային շրջաններ յատկացնել գիւղական հասարակութիւններին կառավարութեան ազատ հողաբաժիններից, ինչպէս օրինակ՝ մատնացոյց էր արված «Աբեւելեան իշխ-ությունն», որը սահմանակից է մեր խոտաւոր դերին և որի վրա աչք են բռնում շատ հասարակութիւններ մեր շրջանում։

Որսորդ

ՂԱՐԱԲԱՂԻ ԼՐԱՐԵՐ

II

Մանքենդ, 4 յուլիսի

Ամառը սկսվում պէս մեր գիւղերում մուտք գտաւ տարափոխիկ հիւանդութիւնը. Շուշումն էլ արդէն հող են գտել դիֆտերիտ և տիֆ հիւանդութիւնները։

Ցաւալի է խօսվել, որ առհասարակ ամեն տեսակ հիւանդութիւն առաջանում է անզգուշութիւնից և անմաքրութիւնից. հիւանդութեան համար հող պատրաստողը և վարակիչ բացիլներ ընդունողը այդ երկուսն են։ Եւ այդ կողմից թէ գիւղացիք և թէ հէնց Շուշի քաղաքացիք դատապարտելի անփոյթ են. հիւանդութիւնը սկսվում է, և, փոխանակ առաջն առնելու, լռում են և ելնում զոհը վերագրում ճակատագրին։

Ցաւալի է գիւղացոց դրութիւնը, որոնք այնքան տգէտ են, որ խուսափում են բժշկի դիմելուց, պատճառաբանելով որ բժիշկը չէ օգնում, ճակատագրի կամքն է մեռնելը։ Խիստ բնորոշ մի դէպք։

Մի շաբաթ առաջ Դայալի գիւղում մի երեխայ դիֆտերիտով հիւանդանում է. գիւղում արդէն վեցերորդ դէպքն է լինում՝ այդ հիւանդութեամբ մեռնողի. և հիւանդին բժշկի մօտ տանելու, լուրջ վերաբերմունք ցոյց տալու փոխարէն՝ դիմում են «չոփ-չիին», որ երեխայի բկի «չոփը» փչի։ Ի հարկէ վերջինս ոչնչով չէ օգնում, և հիւանդը տուն բերվելով մեռնում է։

Առհասարակ գիւղերում առողջապահական տարրական գիտելիքների մասին ոչինչ չը գիտեն՝ որ կարողանան վարակիչ հիւանդութիւնների դէպքում պաշտպանվել։ Եւ եթէ դրա վրա աւելացնենք և այն հանգամանքը, որ գիւղերը գտնվում են խիստ հակառողջապահական պայմանների մէջ, որ ընկղմված են կեղտի, տիղմի, աղբի մէջ, ապա կարելի է եզրակացնել, թէ որքան ցաւալի է գիւղացիների դրութիւնը, որքան կարօտ են խաւարից դէպի լոյսը և կրթութիւնը առաջնորդող գիտակից գաղափարական տարրերի։

Սակայն դժբաղդաբար վերջինից զուրկ են գիւղերը։

Ո՞վ է մտածում կամ ով է շահագրգռված գիւղացիների առողջապահութեան խնդրով։ Այո, դժբաղդ է գեղջուկը իր տգիտութեամբ։

Բայց որքան յանցաւոր է լուսաւոր մարդկութիւնը իր անպարտաճանաչութեամբ։

Ա. Ասլանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կովկասի փոխարքայ գեն.-ադիւտանտ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը գլխիկ է ինքնատերիայի գնեբալ Ն. Պ. Շատիլովին հետևեալ հեռագրով. «Կին բժիշկ Ե. Ե. Սագարդա-Պասերբսկայան ուզարկել է ինձ Կովկասի աղգաբնակութեան ուղերձը Թիֆլիսում պոլիտեխնիքական ինստիտուտ հիմնելու հարցը սկզբունքով դրականապէս լուծելու առիթով։ Յիշեալ ուղերձին ստորագրել են Վրաստանի էկզարխ Նորին բարձրսրբազնութիւն Ինոսկենտին, Թիֆլիսի հայ լուսաւորչական թեմի առաջնորդ Մեսրոպ եղիսկոպոսը, Ռուսաստանի հայ-կաթոլիկների հովանաւոր Տէր-Աբրահամեան վարդապետը, Թիֆլիսի միջնակարգ դպրոցների հոգևորականների քահանայ Յովսէփ Նէյդումը, Թիֆլիսի քաղաքային աւետարանական - լութերականների պաստոր Մայերը, Թիֆլիսի բապտիստների համայնքի նախագահ Մազայէվը, Կուկիայի հին մօլոկանների համայնքի նախագահ Կլեմէնտիէվը, Անդրկովկասեան մուֆտի Հիւսէյնէֆէնդի Գաիբովը, Անդրկովկասի շէյխ-իլ-իսլամի պաշտօնակատար Ախունդ-Մամէդ-Ախունդ-Ալի-օղլի Փիշնամազ-զադէն, Թիֆլիսի պետական հոգևոր բարի Մարկուսը, Թիֆլիսի նահանգի ազնուականութեան ներկայացուցիչները՝ նահանգական պարագլուխ իշխան Աբխազիի զեկավարութեամբ, Թիֆլիսի քաղաքագլուխը և վարչութեան ամբողջ կազմը, դումայի ձայնաւորները, մամուլի, կրթական և բարեգործական ընկերութիւնները, դպրոցները, Թիֆլիսի արհեստաւորաց վարչութեան, առանձին համքարութիւնները, վարկային ընկերութիւնները, բանկերը, մանաւոր առևտրական ձեռնարկութիւնները և այլն, նոյնպէս և զանազան զաղմանքի ու ազգութեան առանձին անձեր։ Հնարաւորութիւն չունենալով շնորհակալութիւն յայտնել ուղերձին ստորագրողներին առանձին-առանձին, խնդրում եմ ձերդ բարձր գերազանցութեանը իմ արտաքուստ երախտիքը յայտնել նրանց ներկայ հեռագիրը հրատարակելով «Кавказъ» լրագրում։ Հաստատ հաւատում եմ, որ պոլիտեխնիկումի հիմնարկութեան գործը կաջողվի մօտ ապագայում բարեբաստիկ վախճանի հասցնել։ Գենեբալ-ադիւտանտ կոմս Վօրոնցով-Դաշկով»։

— Թիֆլիս քաղաքի բոլոր անշարժ ու շարժական գոյքը ապահովագրված է 2.039,246 ռուբլով, որի համար քաղաքը ապահովագրական ընկերութիւններին վճարում է տարեկան 7295 ր. 43 կ. պրեմիում։ Ներկայումս, քաղաքային վարչութեան դիմումի համաձայն, զանազան ապահովագրական ընկերութիւններ իրանց առաջարկներն են անում։ Նոյնիսկ մի ընկերութիւն յանձն է առնում քաղաքի բոլոր գոյքերը ապահովագրել աւելագայա պրեմիայով. տարեկան քաղաքը պիտի վճարի 3,695 ր. 68 կոպէկ։

— Քաղաքային վարչութիւնը լսելով քաղաքային էլեքտրօ-տեխնիկ Նալբանդեանցի վեկուցումը, որ Նիկոլայէվեան գործարանը մինչև այժմ էլ «Դիզելի» զուգաշարժ մեքենան կարգի չէ բերել էլեքտրական կայարանում, որոշեց անմիջապէս առաջարկել յիշեալ գործարանին ճշդութեամբ կատարել պայմանագիրը։ Ապրիլի 8-ից մինչև օրս Նիկոլայէվեան գործարանը քաղաքային վարչութեան կողմից ենթարկված է 60,000 ռուբլի տուգանքի։

— Քաղաքային վարչութիւնը յանձնարարել է Իւ. Դ. Կօբեակօվին կազմել Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան 35-ամեայ գոյութեան պատմութեան համար ծրագիր ու նախահաշիւ։

— Ամսիս 14-ից 1 և կէս ամսով արձակուրդ ստացաւ քաղ. վարչ. անդամ. Մ. Ն. Աթաբէկեանը։ Նրան փոխարինում է Մ. Ա. Զաբարը։

— Պետերբուրգում լուր է պատում, որ վճռված է դեռ ևս պահպանել ուժեղացված պահպանութեան դրութիւնը Կովկասում։

— Կօջօրում ամառս բացվում է ֆելդշերական պունկտ և նրան կից օգերևութաբանական կայարան՝ ֆելդշերի հսկողութեամբ։

— Գանձակի նահանգում մեծ քանակութեամբ դաշտային մկներ են երևացել։ Գանձակի գաւառում նրանք վնասել են 500 դեսեատին ցանքսեր, Արեշի և Ղազախի գաւառներում՝ 2500 դես., Նուխու գաւառում 8—10 հազար դեսեատին։ Նրանք երևացել են նաև Շուշու գաւառում։ Նահանգական ագրոնոմի ասելով՝ մկներին ոչընչացնել կարելի է թունաւորված գարով միայն, որը այժմ գործադրել ապարդիւն կանցնի, որովհետև հունձի ժամանակն է և մկները կը գերադասեն առողջ հատիկներով կերակրվել, քան թունաւորվածով։ Կոտորել մկներին կարելի է միայն վաղ գարնանը։

— Ռուսաց սինոդը կարգադրել է, որ մեսրիքական գրքերում չը յիշվի «ապօրէն ծնված»։ Ամուսնութիւնից դուրս ծնված զաւակները պէտք է ուղղակի գրվեն մօր անունով։ «Ապօրէն ծնված» նկատողութիւնը թոյլատրվում է դուրս ձգել ծննդականների միջից։

— Սուրամից մեզ գրում են, որ տեղական ծխ. դպրոցի 50-ամեայ յօբելեանական հանդէսը կատարվելու է կիրակի, ամսիս 21-ին։ Պատարագից յետոյ տեղի կունենայ դպրոցի հանգուցեալ բարերարների հոգեհանգիստը, իսկ երեկոյեան դպրոցի շէնքում տեղի կունենայ յօբելեանական հանդէս։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

— Յուլիսի 13-ի երեկոյեան ժամը 7-ին Թիֆլիսեցի Նիկոլա Լուկիչ Զիտաէէն (17 տարեկան, բանւոր) Վէրայի կամուրջին մօտ կուր գետում լողանալիս ընկել է խոր տեղը և խեղդվել։ Դիակը հանել և ուղարկել են Միքայէլեան հիւանդանոց։

— Յուլիսի 14-ին Վօրոնցովսկայա փողոցի № 28 տան հանդէպ ձկնորսներ Թիֆլիսեցի Դաբչօ Նիկոլայևիչ Խուրշուդովը և ալէքսանդրօպոլցի Վարոս Առաքելովիչ Մանուկեանը հանել են ջրից մի խեղդված մարդու դիակ։ Պարզվել է, որ խեղդվածը Երևանի նահանգի Նոր-Բայազէտ քաղաքի ընակիչ հոգեկան հիւանդ Եգոր Երուանդեան Մանուկեանն է, 40 տարեկան։

— Քութայիսկայա փողոցի № 18 տանը ապրող Իվան Պետրովիչ Ստեպանովը, 28 տարեկան, Շերեմէտիևսկայա փողոցի ծայրին կուր գետում ձկն լողացնելիս, ընկնում է խոր տեղը և ձկու հետ միասին սկսում է սուզվել, բայց մօտիկ գտնվող ջրահեղձներին ազատող Ալէքսէյ Իվանովիչ Մատրիտինը օգնութեան է շտապում և ազատում։ Ձկն խեղդվում է։

— Բօրչալուի գաւառի հայ Գերդեր գիւղի ընակիչ Բաչուր Արութիւնովիչ Արութիւնովը, 19 տարեկան, Մուշայիդ այգում յուլիսի 14-ի երեկոյեան ժամը 5-ին լողանալիս ընկնում է խոր տեղը և սկսում խեղդվել։ Նրան ազատում է ջրահեղձներին ազատող գօրեցի Ալէքսանդր Գրիգորիևիչ Տվալիէվը։

— Ոստիկանութիւնը յուլիսի 13-ին և 14-ին կատարած շուրջկաների միջոցին Թիֆլիսում կալանաւորել է անցագիր չունեցող 62 հոգի։

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Կոչնակ» շաբաթաթերթի №№ 26 և 27, Նիւ-Եօրկ, 1913 թ.։ 2) «Աւետաբեր» շաբաթաթերթի № 27, Կ. Պոլիս, 1913 թ.։ 3) «Кооперативная Жизнь»-ի № 12—13, Մոսկվա, 1913 թ.։ 4) «Ցոյս» պարբերաթերթի № 1, Կ. Պոլիս, 1913 թ.։ 5) «Հանդէս Ամսօրեայ» № 7, Վիեննա, 1913 թ.։ 6) «Երկունք» ամսաթերթի №№ 8 և 9, Կ. Պոլիս, 1913 թ.։ 7) «Լոյս» ամսաթերթի № 2, Վան, 1913 թ.։ 8) «Բողոք» ամսաթերթի № 6, Մարզուան, 1913 թ.։ 9) «Armenia» ամսագրի յունիսի հատորը, Նիւ-Եօրկ, 1913 թ.։ 10) «Современный Міръ» ամսագրի № 3, Պետերբուրգ, 1913 թ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գօրիս, 10 յուլիսի

Ցայսմանում եմ ի գիտութիւն գօրիսեցի և զանազան գիւղերի իմ բոլոր բարեկամների, ծանօթների և բարերար անձանց, որ երկու տարի զրկված եմ տեսողութիւնից, ունեմ երկու որդի՝ տղայ և աղջիկ, որոնց կը խնդրէի որդեգրել ով կարող է և հնարաւորութիւն ունի, իսկ իմ օգնութեան և թշուառ կացութեան համար օգնութիւն կը խնդրեմ՝ ով որքան կարող է։

Առ այժմ երկու որդուս և ինձ՝ դռնէ-դուռն ընկած մուրալով հազիւ օրական չոր հաց է հասցնում թշուառ կինս։

Գօրիսեցի Կարապետ Ասլանեան

Հասցէս՝ Гор. Герюсы (Елисав. губ.) Карапету Асланову.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Պարիզի դիպլոմատիական շրջաններում խօսում են, որ Բուխարեստն յանձն է առնում ստիպել Թիւրքերին հեռանալու Անդրիանուպոլսից։

— Սալաֆանօֆիները արտաքին գործերի մինիստր Սազոնովին և ստատսսեկրետար Կոկովցեվին հեռագիր են ուղարկել, պահանջելով, որ Ռուսաստանը զրաւի Պոլիսը և կրճատվի Թիւրքական զօրքերի Թիւրը Միդիա-Էնոս սահմանագծի վրա։

— Կ. Պոլսից հաղորդում են, որ մեծ վեզիրը պատասխանել է, թէ նա հնարաւորութիւն չունի կանգնեցնելու Թիւրքական յաղթական զօրքերի արշաւանքը։

— Լոնդոնի պաշտօնական «Westminster Gazette» լրագիրը խօսելով յոգուտ Բոլգարիայի և բալկանեան պետութիւնների՝ առաջարկում է վերջինները անմիջապէս հաշտութիւն կնքել

և ստիպել Թիւրքերին նահանջելու Ադրիանուպոլսի վիլայէթից։

✦ Վիէննայում տեղեկութիւն է ստացված, որ Էնվեր-բէյը հեռացել է Ադրիանուպոլսի մօտից։ Բոլգարական տեղեկութիւնների համաձայն, քաղաքից փախած ազգաբնակութեանը հրամայված է վերադառնալ։ Թիւրքիան հաշտութեան մերձենալու պատճառով ըմբռնում է իր նախաձեռնած քայլի վտանգաւորութիւնը։

✦ Մեծ պետութիւնների հաւաքական քայլ անելը Թիւրքիայի դէմ, նոյնպէս և ծովային ցոյցի դիմելու առաջարկները, Գերմանիայի ազդեցութեամբ, չեն ընդունվել։ Վերջինս առաջարկում է ազդել դիպլոմատիական ճանապարհով։ Առանձնապէս Ֆրանսիան առաջարկեց մանդատ տալ Բուլգարիային Թիւրքերին հեռացնելու այդ այժմվայ իր գրաված շրջաններից։ Բուլգարիան հրաժարվել է ընդունել։

✦ Թիւրքիան Փոքր-Ասիայում երեք զօրաբանակ է դէնքի կանչում Էնվեր-բէյի բանակը ուժեղացնելու նպատակով։ Վերջինս վճռել է գնալ Ֆիլիպպօպոլի վրա։

✦ Սերբերը, չերնոգորցիներին իբրև հատուցում պատերազմի գործողութիւններին մասնակցելուն, մատուցիր են տալ Նովօ-Բազարի սանջակի մի մասը։

✦ Սոֆիայից հաղորդում են, որ Դանէվը գիշերով հեռացել է քաղաքից։ Նրա գնալը փախուստի բնաւորութիւն է կրում։ Բուլգարները, հակառակ իրանց յայտարարութիւնների, շարունակում են առաջ խաղալ։ Նրանք արդէն անցել են Բալկանները ու մտել Սոֆիայի հովիտը։

✦ Վառնայում կայացած բազմամարդ ժողովը հետևեալ բանաձևն է ընդունել. «Պատուաւոր հաշտութիւն գտնել Ֆերդինանդ թագաւորին արտաքսելով»։ Թագը կառաջարկվի Կոնստանտին դուքսին։ Զօրքը հրաժարվում է դահակալութեան կոչել չերնոգորական Նիկոլայ թագաւորի երկրորդ որդուն։ Ֆերդինանդը այրել է դիպլոմատիական բազմաթիւ կարևոր փաստաթղթեր։

✦ Պետութիւնները յայտնել են Բոլգարիային, որ Մակեդոնիայի աւտոնոմիան անընդունելի է։

✦ Բուլգարական զօրքերին հրամայված է գրաւել Սոֆիան սերբերի դալուց առաջ։

✦ Բուլգարիան համաձայնվել է օգնել Ֆերդինանդ թագաւորին այն դէպքում միայն, եթէ ներքին անարիւնարծագելու լինի։

✦ Աւստրիական շրջենաւերը, բուլգարներից գրաւելու երկիղից, հեռացրին Դունայով դէպի վեր։ Բուլգարական հրաւաց դեսպանի միջնորդութեամբ, բուլգարները օրական երկու անգամ յետ են քաշում կամուրջները Դունայով դէպի վեր անցնող ռուսական նաւերի համար։ Բոլգարները ընդհակառակը աւելի թշնամաբար են վերաբերվում դէպի ռուսները։ Մի քանի օր առաջ ռուսաց «Բէլգրադ» շրջենաւը գնդակահարութեան ենթարկվեց բոլգարական ափից։ Նաւթատար նաւը թողնելով, «Բէլգրադը» շտապով հեռացաւ դէպի բուլգարական ափը, ապա բողոքեց հիւպատոսին։

✦ Թէհրանում տեղեկութիւններ են ստացվել, որ Սալար-ուդ-Դովլէն մեծ ոյժերով արշաւանք է սկսել Քիրմանշահի վրա։

✦ «Էլին Լիսների» գործարանում բանւորների գործադուլը 60-րդ օրն է որ շարունակվում է։ Գործադուլարարների մէջ վերջին օրերս լուր է տարածվել, որ գործադուլին մասնակցող հրեայ բանւորներին մտադիր են արտաքսել Պետերբուրգից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)
13 և 14 յուլիսի

ԲՐԵՄԷՆ։ Գործադուլարարների թիւը հասնում է 16,000-ի։ Բացի նաւաշինարարների բանւորներից, գործադուլ են անում նոյնպէս սախատակեղէնի բանւորներն ու հիւսները։

ԲԷԼՕՍՏՕԿ։ Մանողների գործադուլի շնորհիւ թելի մեծ պակասութիւն է զգացվում, որի պատճառով և Գործարաններում աշխատանքները կանգ են առնում։ Գործարաններից մի քանիսը փակվեցին։

ՉԵՐՆԻԳՕՎ։ Ժողովրդական ուսուցիչների և վարժուհիների համար կառավարութեան վճռած օրէնքի կազմակերպած մանկավարժական ժամանակաւոր դասընթացքները 32 օր տևելուց յետոյ փակվեցին։ Ցաճախում էին 220 ունկնդիրներ։ Դասընթացքներին կից կար օրինակելի տարրական դպրոց չորս բաժանմունքներով։ Ունկնդիրները հաւատարիմ հպատակութեան հեռագիր ուղարկեցին Կայսրին, ժողովրդական լուսաւորութեան Թագաւոր Հովանաւորին։ Ունկնդիրները գնացին Կիևվի ցուցահանդէսը։

ՕԴԵՍՍԱ։ կամաւոր նաւատորմի «Խէրսոն» շոգենաւով բերվեցին Աֆոնից Պանտալէյմոնեան և Անդրէյեվեան անապատների 616 վարդապետները։

ԿԷՕՂՆ։ Սպանական թագաւորական զոյգը մեկնեց Լոնդոն։

ՔԻՇԻՆԷՎ։ Դեկտեմբերի նոր հեղեղումից Բենդէրեան և Օրգէյեվեան գաւառներում հեղեղված են մի շարք գիւղեր և մեծ տարածութեամբ դաշտեր ու պարտէզներ։ Վնասները 100,000 ռուբլուց աւելի են։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Կոպենհագենից Էսթիէր գնալիս արտակարգ գնացքը դուրս եկաւ գծից և ընկաւ թումբից ցած. սպանվել են 16 հոգի և մի քանիսն էլ ծանր վիրաւորվել։

ԼՕՆԴՕՆ։ Յուլիսի 13-ին երեկոյեան տեղս ժամանեց սպանական արքայական զոյգը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կուլ է տրվում հեշտութեամբ եւ չուծում է հիանալի

Մի կարծէք, թէ Սկավուլինը վատ կարող է ներգործել նրա համար, որ ընդունվում է հեշտութեամբ։ Սկավուլինը ներգործում է հիանալի, դրա համար և նրան գործածելը շատ յարմար է։ Որոշ լուծողականներ առաջացնում են արտախառնոց։ Սկավուլինը դեղատիկներ է առանց համի և հոտի։ Նա նոյնպէս լաւ ազդեցութիւն է անում աղիքների վրա։ Նրա ներգործութիւնը ճաշակի համապատասխան է. ներգործում է հաճելի, մեղմ, չէ գրգռում ջղերը։ Նա առաջացնում է կանոնաւոր արտաթորում, մաքրում է աղիքները բոլոր կեղտերից, որոնք թունաւորում են արիւնը, անհետացնում է ընդմիշտ ամենայատակ կապութիւնը։ Նա արագացնում է աղիքների, լեարդի և երիկամունքների գործունէութիւնը, շնչառութեան թարմութիւնը, անհետացնում է գլխացաւը և բանում է ախորժակը։

ՍԿԱՎՈՒԼԻՆԸ

Լուծողական է — դեղատներում, առանց հոտի և համի։

Ամերիկայի եղիսաբէթեան դպրոցի համար հարկաւոր են **ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ** 19 դաս ռուսաց լեզուի՝ IV, V և VI բաժանմունքներում, 2 ռուսաց պատմութեան և 1 ռուսաց աշխարհագրութեան՝ V և VI բաժ.—22 դասը 550 ռուբլի ռոճիկով։ 10 դաս կրօնի՝ I և II բաժ., 11 հայոց լեզուի՝ I և V բաժ. և 4 գրութեան—25 դաս 555 ռուբլի ռոճիկով։

Կարապետեան դպրոցի համար ռուս. լեզուի, ռուս. պատմութեան և ռուս. աշխարհագրութեան 23 դաս 575 ռ., և մարմնամարզութեան 14 դասի, երգեցողութեան 6 դասի՝ ընդամենը 20 դաս 400 ռ. ռոճիկով, և մի գիւղատնտես, որն աւանդելու է 12 դաս ընդհանրութիւն և 8 դաս գիւղատնտեսական գիտելիքներ, այլև ունենալու է գործնական պարապմունքներ դպրոցի ագարակում։ Գիւղատնտեսի ռոճիկի և միւս պայմանների մասին կարելի է տեղեկանալ հոգաբարձութիւնից մինչև յուլիսի 25-ը, որին պէտք է դիմեն նաև խնդրատու ուսուցիչները։ 567. 3—2

ԳՕԿՏՕՐ Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ընդունակում է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կարդում պրոֆիլաքսիների հետ։ Նոր հասցէն՝ Berlin N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden. 92—74.
(Հ. ու.) 412. 20—16

Վաճառվում է ամենաթարմ և խոշոր տեսակի
ՀԻՄԱԼԱՅԱԿԱՆ ՏԿԼՈՐ ԴԱՐԻ
(Ստացված Ց. ք. Ապրիլեանի փոքրաղաշտից)։ Ճանաչված է բժիշկների կողմից որպէս ամենաառողջարար և մանգարար սուրճ, մանաւանդ սրտի թուլութիւն ունեցողների և երեխաների համար։ Շտապեցէք քանի դեռ չէ վերջացել։ Պուդով 2 ռ. 40 կ., ֆունտը 10 կ.։ Ճանապարհածախքը գնողի վրա։
Դիմել՝ Душетъ, А. Априляну.
(Հ.շ.) 572. 3—1

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԲԱԳՐԱՏ ԱՑՎԱԶԵԱՆԻ
Սասունը այրվում է
գիրքը։ Դրամա 5 գործ.։
Գինը հատ տակ 50 կ., գումարով զեղչ։ Դիմել՝ Тифлисъ, Приказная ул. № 12. Баграту Айвазянцу.
(Հ.կ.) 573. 3—1

Ռոմանոս Մելիքեանի էսքիզներից
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴ. ԵՐԳԵՐԻՑ
(ՊՐԻՄԻՏԻՎՆԵՐ)
Առաջին սերիա (in 8)
1) Կոտ ու կէս, 2) Լուսնեակին անուշ, 3) Անձրևն եկաւ, 4) Բինգեօլ, 5) Աղջկերք պար բռնեցէք, 6) Արի Մանան։
Դիմել՝ Կովկասի հայ բոլոր գրավաճառներին. իւրաքանչիւր համար երգը 10 կ.։
(Հ.) 533. 3—3

Վերին-Ագուլիսի եկեղեցական ծխ. դպրոցների համար հարկաւոր է
մի փորձված ուսուցիչ
հետեւեալ առարկաների համար. թւաբանութեան 15 դաս, ընդհ. աշխարհագրութեան 4 դաս և երկրաչափ. ձեռագիրութեան 3 դաս, ընդամենը 22 դաս։ Բացի գրանից նա պիտի վերակացութիւն անի տղայոց մասում։ Ռոճիկն է 500 ռ.։
Դիմել «Մշակի» գրասենեակին ժ. 1—2, կամ Ա. Դաւթեանին՝ Мельничный пер., № 5, ժամը 8—10 առ.։
(օ.մ.) 574. 3—1

ՇՔԵՂ ՁԵՌԱԳՈՐԾԻ, ԿԱՐՈՒՋԵԻ ԵՒ ՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ կուրսերը աւարտած, մի քանի տարվայ փորձառութիւն ունեցող և հմուտ իր գործին
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
որ ունի նաև ՊԵՏԱԿԱՆ ՑԵՆԶ (ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻՑ), յարմար պաշտօն է որոնում հայոց դպրոցներից մէկում. կարող է ստանձնել նաև ՎԵՐԱԿԱՑՈՒՀՈՒ պաշտօն։ Համաձայն է գնալ քաղաքից դուրս։ Վերոյիշեալ առարկաներից ունի պատշաճաւոր ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ։ Դիմել «Մշակի» գրասենեակին։
(Կ. Հ.) 566. 4—2

ՕԳՏՎԵՑԻՔ ԴԷՊՔԻՑ
Վաճառվում են **Յ. Դաղբաշեանի** բառաբանների
ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ
ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ռ., կազմած 9 ռ.։
ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ռ., կազմած 6 ռ. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ռ.։ Ճանապարհածախքը հեղինակի վրա։ Աշխարհաբարի քննական քերականութիւնը նոյն հեղինակի, գինը 50 կոպէկ։ Դիմել՝ А. Дагбашяну. Коргановская ул. № 9. кв. 2. Въ г. Тифлисъ.
(Հ.) 494. 10—4

ՀԻԻԱՆԴՆԵՐԻՆ

Սպէրմին-Պէլիով օգտվող հիւանդներին աշխատում են խարել մեծախոստում բէկլամներով սերմային երկաթից պատրաստված հեղուկների մասին, ըստ որում այդ բէկլամների մէջ անամօթաբար խեղաթիւրում են փաստերը և մատնացոյց են լինում եւրոպական գիտնականների անուան և աշխատութիւնների վրա, մինչդեռ այդ գիտնականները երբէք չեն տեսել այդ պրէպարատները։ Մենք մեր պարտքն ենք համարում նախազգուշացնել հիւանդներին այդ մակլաւներից, որովհետև նրանք՝ չունենալով ոչ մի առնչութիւն Սպէրմին-Պէլի հետ՝ շատ անգամ պարունակում են իրանց մէջ հակասաղջական նիւթեր։

Նեվրասթենիայի, սեռական բուլութեան, զառամութեան, իստերիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, բոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (շաղութին, սրտի պնդախտութիւն, սրտի բարախտ, պերէբոյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումի, ալկոհոլիզմի, ոգնաբարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած բուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետեւանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների գիտութիւնները։

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել **ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ** անուան վրա և մերժել բոլոր մակլաները և հեղուկները զանազան անուններով, որոնց անպէտքութեան մասին հրատարակված է առանձին բրոշիւր, որն ուղարկվում է ձրի՝ Սպէրմինի մասին եղած նորագոյն գրականութեան հետ միասին։

ՍՊԷՐՄԻՆ ՊԷԼԻՆ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ։

ОРГАНОТЕРАПЕВТЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-ья
Поставщики Двора
ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
С.-ПЕТЕРБУРГЪ.
(П. 69718) 12—8

ՈՍԿԷ ԺԱՄԱՑՈՅՑ
ՅԱՄԱՑՈՅՑԻ ԻՍԿԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
բոլորովին հարկաւոր չէ։ Փոխ. 200 ռ. արժեցող ոսկէ ժամացոյցի առաջարկում ենք անմիջական կերպով բերել տալ Բերլինից ֆրանս. նոր ոսկուց շինված ժամաց. «ԽՐՈՆՈՄԷՏՐ» անունով, որը թէ ձևի և թէ շքեղութ. կողմից չէ տարբերվում ոսկէ ժամացոյցից և արժէ 4 ռուբ.։ Այդ ժամաց., թէ տղամ. և թէ կանացին, շատ տարփակ է, երկու փականներով ծածկված էլիքար. միջոցով 18 քարատան. ոսկէ հատ շղթայով։ Ժամաց. մեխանիզմը ամենալաւ տեսակի է, քարերով, լարումը «Բէյմենտաւտ» 40 ժամը 1 անգամ և մինչև ծայրերը սառուցված ընթացքով։ **Ուղիղ բանիս համար երաշխաւորում ենք 10 տարով։** Ժամաց. գինը 4 ռուբ., 2 հատ՝ 7 ռ. 50 կ., 4 հատ՝ 14 ռ. 25 կ.։ Ով մեկնեց բերել տալ այդ ժամաց., նա ընդմիշտ շնորհակալ կը մնայ։ Իւրաքանչ. ժամաց. 2Ռի կցում ենք. 1) Ոդամ. շղթայ երկկողմ, կամ կանացի՝ պարանոցային, ֆրանս. իսկ ոսկուց, 2) Բրելոկ-բինոկլ պարիզեան հետաքրքր. տեսարաններով և 3) Ձամշեայ քսակ ժամաց. համար։ Ամենապատշաճագիր, հանդերձ մաքով, 50 կոպ. (Միջին 75 կ.)։ Պատուէրները ճշգրիտ ուղարկվում են վերադիր մեծ. և առանց կանխավճարի։ Գրել կարելի է ամեն լեզուներով, հետեւեալ հասցէով, որը կարելի է արտագրել և կամ թէ դուրս կարել և ամուր կպցնել ծրարի երեսին (փակ նամակներին կպցնել 10 կ. մարկա, իսկ բաց նամակներին՝ 4 կ.)։

Հասցէ ազրել
Berlin I. Strumfeld
Берлинъ. 92. Klosterstr. № 42

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ! Գեղջկներից խուսափելու համար յայտարարում ենք, որ մեր ժամացոյցները իսկական «ԽՐՈՆՈՄԷՏՐ» է և ցիֆերբլատի վրա գրված է «Բերլին ԽՐՈՆՈՄԷՏՐ»։
(2,9,16,25) (Ռ. 38175) 5—4

ՄԱՍՍԱԺԻ ԴՊՐՈՑ եւ բժշկական մարմնամարզ. **Մ. Ի. ԿՈՒԼԱԿՕՎԱՅԻ.**
գօսպիտալի դարձթաց. երկու սեռի համար։ Դպրոցմունքների սկիզբը սեպտ. 15-ից։ Նորը 8 ամիս։ Գիշերները և ֆիզիքուհիների համար 4 ամիս։ Խնդիրների ընդունել. մինչև սեպտ. 10-ը։ С.-Петербургъ. Серпуховская ул. 7.
(Ի.) (П. 101702) 3—1

95 ԿՕՊԷԿՈՎ
ՄԵԾ ՀԻԱՑՄՈՒՆՔ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ
ՏՆԱՑԻՆ ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐՔՈՑԿԸ
Այս գրքոյկով իւրաքանչիւրը կարող է գուշակել այլոց մտքերը, տեսակներ առաջացնել, իմանալ ով ում է սիրում, ամենքի անուանը։ Օձը փայտ կարելի է դարձնել, իսկ ցուրտը գինի։ Մագիայի խորհուրդները և գաղտնիքները վերջապէս բացված են։ Զարգացողը ընկել է վերջապէս և այժմ կարելի է վերցնել շիկացած երկաթը մերկ ձեռքերով, մինչ մենք լեզուի մէջ, ծակել իրան սրով, ցուցադրել կտրած լոսող գլուխը և ինքն իրան անխոցելի դարձնել։ Ջուրը գրամի վերածելու արուեստ։ Բնակարանը վայրենապէս լցնել ջրով կամ մառախուղով և բազմաթիւ այլ շլացուցիչ ֆոկուսներ։ Ֆոկուսների ժամանակ ամեն տուն կարելի է վերածել կախարդված ամրոցի։ Գինը **95** կոպ.։ Ուղարկ. է վերադիր վճ.։ Առաքման և վերադիր վճ. համար ուեւլորդ հաշվումիտ 25 կ.։ Զգուշացէք կեղծիքներից։ Նորագոյն հրատ.։ Լրացրած 272 էջ և բազմաթիւ նկար.։ Т-во «Заря», Варшава, отд. 92.
(16,27) (Ռ. 40602) 3—2

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայիլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական դրամմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier գրագրների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ըստ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկեան, բանկային և գործարանական). 2) Առեւտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն հաշիւի վրա. 7) Գայնչագրութիւն, արագագրութիւն (ամենատար ձեռքի ուղղագրութիւն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Մագրութիւն. 3) Գեոգրաֆիա (բեմնագոն և ուր. և 4) Առեւտր. Հաշուապահութիւն օտար լեզուներով։ Դրամմունքները կատարվում են և դասա-դասա։ Ունկնդիրների թիվ թղթակցութիւն օտար լեզուներով։ Դրամմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Գուրսերը ֆիրմաների յանձնարարում են հաշուապահներ, օգնական ներ և առեւտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ առեւտր. փաստաբան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(Հ. հ. կ.) 556. 0—4



ՊԱԼԱՍ-ՀՕՏԵԼ
ԼՕԶ
Նորագոյն առաջնակարգ հիւրանոց
150 շքեղ կահաւորված համարներ
1 ռ. 50 կ-ից սկսած
Առանձին ուշադրութիւն է դարձված օրինակելի մաքրութիւն, անդորրութիւն և կարգ ու կանոն պահպանելու վրա։
(Հ.շ.) (Л. 12046) 8—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный